**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք, ՀՀ
Լոռու մարզ, գ.Դարպաս, 3-րդ փող. 5, Հեռ. (0322)6-06-24 ,
darpas.lori@mta.gov.am

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

N 110
*29 մայիս 2017թ.*

Հարգելի պարոն Նալբանդյան
Ձեզ եմ ներկայացնում Դարպաս համայնքի ղեկավարի թիվ 30-33 որոշումները:

Առդիր՝4 էջ:



**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Արմեն Ալոյան**

*Կատ. Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Դ. Վարդանյան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 30

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՄԻԿ ԴՈԴՈՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Համիկ Դոդոյանի 2017թվականի մայիսի 22-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 19 թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ և 6-րդ կետերով. Որոշում եմ՝

1.Դարպաս համայնքի 3 փողոց 18 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Համիկ Դոդոյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

20 __ թ. ____________
գ.Դարպաս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 31

## ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ 2016-2017ԹԹ.ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, համաձայն Դարպաս համայնքի ավագանու թիվ 3-Ն որոշման, կայացած 26.01.2017թ-ին գործառնական դասակարգման բաժին 9, խումբ 2, դաս 2, ծրագիր 51, հոդված 4729 նախատեսված միջոցներից.
Դարպաս համայնքի ղեկավարը որոշում է.

Դարպաս համայնքի միջնակարգ դպրոցի 2016-2017 թթ. շրջանավարտներին «Վերջին զանգի» կապակցությամբ տրամադրել դրամական աջակցություն.

1. Անտոնյան Գոհար Սեդրակի - 5700 դրամ
2. Ասլամազյան Լաերտ Մերուժանի - 5700 դրամ
3. Ասլանյան Հրանուշ Ստեփանի -5700 դրամ
4. Ավետյան Նաիրա Վահրամի - 5700 դրամ
5. Գրիգորյան Էմանուել Սամվելի - 5700 դրամ
6. Հակոբյան Շուշաննա Խաչատուրի - 5700 դրամ
7. Հարությունյան Արծրուն Ահարոնի - 5700 դրամ
8. Միտիչյան Տաթևիկ Արթուրի - 5700 դրամ
9. Նանայան Գևորգ Խաչատուրի - 5700 դրամ
10. Ուտկինա Էլլա Հովիկի - 5700 դրամ
11. Ջանվելյան Սեյրան Արսենի - 5700 դրամ
12. Սարիբեկյան Անի Անդրանիկի - 5700 դրամ
13. Սիմոնյան Հայկ Վարդանի - 5700 դրամ
14. Վարդանյան Գևորգ Արայիկի - 5900 դրամ

Ընդամենը կազմում է՝ 80000 (ութսուն հազար) դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 32

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի «ՔՊ պլանների մշակման կարգը սահմանելու մասին» թիվ 633-Ն որոշման 6-րդ կետի «է» ենթակետի,
Որոշում եմ.

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել՝
1) Համայնքի ՔՊ վիճակի հիմնական ցուցանիշները համաձայն հավելված 1-ի,
2) Համայնքի տարածքի հնարավոր իրավիճակը և բացատրագիրը համաձայն հավելված 2-ի,
3) Համայնքի կառավարման, կապի և ազդարարման սխեման, համաձայն հավելված 3-ի,
4) Համայնքի ՔՊ հետախուզության և բացատրագիր, համաձայն հավելված 4-ի,
5) Համայնքի ակչության անհատական պաշտպանական միջոցներովապահովման հաշվարկը, համաձայն հավելված 5-ի,
6) Համայնքի բնակչության պատսպարման հաշվարկը, համաձայն հավելված 6-ի,
7) Համայնքի բնակչության տարահանման հաշվարկը, համաձայն հավելված 7-ի,
8) Համայնքի ՔՊ ուժերի և միջոցների հաշվարկը, համաձայն հավելված 8-ի,
9) Հաշվարկ կապի միջոցների, համաձայն հավելված 9-ի,
10) Հաշվարկ ինժեներական ապահովման տեխնիկայի, համաձայն հավելված 10-ի,
3.Յուրաքանչյուր տարի մինչև փետրվարի 1-ը կատարել ճշգրտումներ Համայնքի ՔՊ պլանում՝ տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ:
4.Հրամանի կատարման հսկողությունը թողնում եմ ինձ վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

20 __ թ. ________________
գ.Դարպաս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 33

## ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Դարպաս համայնքի ղեկավարի փետրվարի 08-ի « Դարպաս համայնքի 2017 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային համամասնությունները հաստատելու մասին» թիվ 16 որոշմամբ,
Որոշում եմ.

Դարպաս համայնքի 2017թ-ի բյուջեի բաժին 08, խումբ 02, դաս 03, ծրագիր 51, հոդված 4637 նախատեսված 2710.000(երկու միլիոն յոթ հարյուր տաս հազար) դրամը 3-րդ եռամսյակից տեղափոխել 2-րդ եռամսյակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

20 __ թ.
գ.Դարպաս